

COVID-19 Վարակակրի Հետ Շփումների Կառավարման Ծրագրի Ուղեցույց Կազմակերպված Երիտասարդական Սպորտային Ծրագրերի Համար

Վերջին օրվա փոփոխումները: (Փոփոխությունները նշված են դեղին գույնով)

10/7/2021

- Ավելացվել է կրճատված կարանտինի տարբերակ վարակակրի հետ շփված այն անձանց համար, որոնց մոտ ախտանիշներ չեն դրսևորվում և որոնցից թեստի համար նմուշը վերցվել է վարակակրի հետ վերջին շփումից հետո 5-րդ Օրը կամ ավելի ուշ, և արդյունքը եղել է բացասական:
- Պարզաբանվել է, որ վարակված անձի թիմի անդամներից պահանջվում է երկու շաբաթ շարունակ շաբաթական մեկ անգամ թեստավորվել՝ անկախ պատվաստման կամ վարակակրի հետ շփման կարգավիճակից, սկսած այն պահից, երբ վարակակիրը վարակող եղած ժամանակ վերջին անգամ ներկա է գտնվել թիմում:
- Ավելացվել է, որ ակտիվ բռնկում ունեցող Երիտասարդական Մարզական Ծրագրերի թիմերից կամ խմբերից կարող է պահանջվել դադարեցնել գործունեությունը մինչև Հանրային Առողջության Վարչության հետագա ծանուցումը:
- Պարզաբանվել է, որ կեղծ դրական թեստերը չեն ընդունվելու ակտիվ բռնկում ունեցող Երիտասարդական Մարզական Ծրագրերում:
- Վերակազմակերպվել է բովանդակությունը՝ փաստաթղթի ընթերցումն ու ըմբռնումը պարզեցնելու համար:

Համայնքներում COVID-19-ի ազդեցությունը սահմանափակելուն ուղղված հանրային առողջության նպատակային արձագանքը կարող է օգնել առավելագույնի հասցնել Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջության Վարչության (DPH) COVID-19-ի արձագանքի ազդեցությունը:

Կազմակերպված Երիտասարդական Սպորտային Ծրագրերը համայնքի վստահելի գործընկերներ են, որոնք կարող են օգնել Հանրային Առողջության Վարչությանը (DPH) բարելավել Հանրային Առողջության արձագանքի ժամանակն ու ազդեցությունը՝ COVID-19 Վարակի Հետ Շփումների Կառավարման Ծրագրի (EMP) արագ նախաձեռնման միջոցով: Վարակի Հետ Շփումների Կառավարման Ծրագրի (EMP) անհապաղ իրականացումը, երբ COVID-19-ի մեկ դեպք հայտնաբերվի ժամանցային Սպորտային ծրագրի շրջանակներում, կարող է մեծացնել վարակի տարածումը սահմանափակելու կարողությունը և կանխել բռնկումների առաջացումը:

COVID-19-ով վարակված 1, 2 և 3 կամ ավել դեպքերի հետ շփումների կառավարման քայլերը Կազմակերպված Երիտասարդական Սպորտային Ծրագրի մեջ նկարագրված են ստորև և ամփոփված են Հավելված A-ում: Քանի որ Կազմակերպված Երիտասարդական Սպորտային ծրագրերը կունենան մատչելի միջոցների տարբեր ծավալներ COVID-19-ի վարակի հետ շփումների կառավարման համար, *պահանջվող* քայլերը նվազագույն տարրերն են, որոնք պետք է ներառվեն Կազմակերպված Երիտասարդական Սպորտային Ծրագրում (EMP): *Խորհուրդ տրվող* քայլերը ներառում են վարակի հետ կառավարման ընտրովի տարրեր, երբ միջոցները բավարար են:

Նշենք, որ վարակակրի հետ շփումների կառավարման սույն ուղեցույցը վերաբերում է կազմակերպված ժամանցային սպորտային լիգաներին, ակումբային սպորտին, ճամփորդող սպորտին (էլիտար թիմեր), սպորտային իրադարձություններին/հանդիպումներին/մրցումներին և սպորտաձևերին, որոնք հովանավորվում են TK12 դպրոցների աշակերտներին ծառայող մասնավոր և պետական դպրոցների կողմից: Այս ուղեցույցը լրացնում է [Կազմակերպված Երիտասարդական Սպորտաձևերի](#)

Արձանագրությանը, որն ամփոփում է այս ոլորտի պահանջները և լավագույն գործողությունները: Այս ուղեցույցը չի վերաբերում կոլեգիալ կամ մասնագիտական սպորտի կամ համայնքային միջոցառումներին, ինչպիսիք են մարաթոնները, կիսամարաթոնները և դիմացկունության մրցավազերը:

Երիտասարդական Սպորտային Ծրագրում COVID-19-ի տարածման վտանգի վրա ազդում են հետևյալ գործոնները.

- COVID-19- ի դեմ վտանգը **նվազում է**, քանի որ ավելի շատ անհատներ ամբողջությամբ պատվաստվում են:
- COVID-19 պատվաստումների բացակայության դեպքում վտանգը **մեծանում է** հետևյալ դեպքերում. (1) սպորտաձևեր, որոնք ունեն ավելի սերտ շփման մակարդակ մասնակիցների միջև (մասնավորապես դեմ առ դեմ շփում փակ տարածքներում անցկացվող մարզաձևերում). 2) սպորտաձևեր, որոնք ունեն ավելացած հաճախականություն և սերտ շփման ավելի երկար տևողություն. (3) բարձր շփման սպորտաձևեր, որոնք ունեն ավելի մեծ ջանքերի մակարդակներ, որոնք մեծացնում են շնչառության մակարդակը և ամեն շնչի ժամանակ ներշնչվող և արտաշնչվող օդի քանակը:

Այս ուղեցույցում «տուն» տերմինը սահմանվում է որպես «մեկ կենցաղային միավորում միասին ապրող մարդիկ» և չպետք է ներառի հաստատություններում ապրող խմբերին, ինչպիսիք են հանրակացարանները, տղաների և աղջիկների համատեղ ապրող խմբերը (fraternities and sororities), վանքերը, միաբանությունները կամ խնամքի բնակելի հաստատությունները, ինչպես նաև չի ներառում բնակելի այնպիսի շահութաբեր հաստատություններ, ինչպիսիք են գիշերօթիկ տները, հյուրանոցները կամ մոթելները¹: «Աշխատակազմ» և «աշխատող» տերմինները ներառում են մարզիկներին, աշխատողներին, օժանդակող անձնակազմին, կամավորներին, ուսանող-աշխատողներին (interns) և վերապատրաստվողներին, գիտնականներին և բոլոր այլ անհատներին, ովքեր աշխատանքներ են իրականացնում տեղում կամ ժամանցային սպորտային գործողությունների ժամանակ: «Խաղացողներ», «մասնակիցներ», «ընտանիքի անդամներ», «այցելուներ» կամ «հաճախորդներ» տերմինները ենթադրում են ներառել հասարակության անդամներ և այլ անձինք, ովքեր անձնակազմ կամ աշխատողներ չեն, և ժամանակ են անցկացնում բիզնեսում կամ տեղում կամ մասնակցում են գործողություններին: «Հիմնարկություն», «տեղամաս» և «հաստատություն» տերմինները վերաբերում են շինություններին կամ տարածքներին, որտեղ իրականացվում են թույլատրված գործողություններ: “LACDPH”-ը կամ “Հանրային Առողջությունը” Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջության Վարչությունն է:

Վարակի Հետ Շփումների Կառավարման Ծրագրումը Նախքան COVID-19-ի 1 Դեպքի Բացահայտումը

- ❑ **Պահանջվում է:** Ունենալ նշանակված COVID-19 Կազմակերպված Երիտասարդական Սպորտային Ծրագրի Համապատասխանության Պատասխանատու (այստեղ՝ «Համապատասխանության Պատասխանատու»), որը պատասխանատու է COVID-19 անվտանգության բոլոր գործընթացները հաստատելու և գործադրելու համար և ապահովելու համար, որ բոլոր մասնակիցները կրթություն ստանան COVID-19-ի վերաբերյալ: Նշանակված COVID-19 Համապատասխանության Պատասխանատուն ծառայելու է որպես Հանրային Առողջության Վարչության (DPH) հետ կապող օղակ՝ Կազմակերպված Երիտասարդական Սպորտային ծրագրում COVID-19-ի տարածումը վերահսկելու

¹Լոս Անջելեսի Շրջանի Օրենսգիրք, Վերնագիր 22. §22.14.060-Ընտանեկան սահմանում: (Կարգ. 2019-0004 § 1, 2019)
https://library.municode.com/ca/los_angeles_county/codes/code_of_ordinances?nodeId=TIT22PLZO_DIV2DE_CH22.14DE_22.14.060F

վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու համար:

- ❑ *Պահանջվում է:* Ունենալ թեստի հասանելիություն ունենալու կամ COVID-19-ի թեստ հանձնելու ծրագիր այն բոլոր մասնակիցների և անձնակազմի անդամների համար, ովքեր (1) ունեն ախտանիշեր, որոնք համապատասխանում են COVID-19-ին, (2) կարանտինի մեջ են վարակակրի հետ շփվելու պատճառով կամ (3) Կազմակերպված Երիտասարդական Սպորտային Ծրագրի մեջ են, որտեղ հանրային առողջապահության հետաքննություն է ընթանում: *Նշում՝ թեստավորում կամ կարանտին չի պահանջվում ախտանիշներ չունեցող այն անձանցից, ովքեր լիովին պատվաստված են² կամ վերջին 90 օրվա ընթացքում ապաքինվել են լաբորատորիայում հաստատված COVID-19-ից, քանի դեռ Հանրային Առողջությունը դա անհրաժեշտ չի համարում՝ որպես ընթացիկ հետաքննության մաս:
- ❑ *Պահանջվում է:* Ունենալ **ծրագիր, որը պահանջում է**, որ չպատվաստված երիտասարդ մարզիկները և անձնակազմի անդամները, որոնք փակ տարածքում մասնակցում են միջին կամ բարձր վտանգավորության սպորտաձևերի, և 12 տարեկանից բարձր տարիքի չպատվաստված երիտասարդ մարզիկները և անձնակազմի անդամները, որոնք փակ տարածքում մասնակցում են միջին կամ բարձր վտանգավորության սպորտաձևերի, ամեն շաբաթ թեստ հանձնեն: Բացի այդ, էթե երիտասարդական մարզական թիմում կա COVID-19-ի հաստատված դեպք, ապա երիտասարդական թիմի մարզիկներից և անձնակազմի անդամներից պահանջվում է շաբաթը մեկ՝ 2 շաբաթ տևողությամբ, թեստ հանձնել՝ անկախ նրանց պատվաստման **կամ վարակակրի հետ շփման** կարգավիճակից: Նշում՝ ամեն շաբաթ **ստուգող** թեստավորում չի պահանջվում (1) լիարժեք պատվաստված անձանցից, (2) այն անձանցից, ում մոտ վերջին 90 օրվա ընթացքում լաբորատոր կերպով հաստատվել է COVID-19, և նրանք վերջերս են ապաքինվել, (3) 12 տարեկանից ցածր տարիքի պատանի մարզիկներից, որոնք մասնակցում են բացօթյա անցկացվող ցածր, միջին կամ բարձր ռիսկայնության սպորտաձևերի: Սպորտաձևերի ցանկն ըստ վտանգի կարգերի ներկայացված է **Կազմակերպված Երիտասարդական Մարզաձևերի Արձանագրությունում:**
- ❑ *Խորհուրդ է տրվում:* Մի քանի շրջաններ ընդգրկող բազմօրյա մրցումների ընթացքում խորհուրդ է տրվում, որ այս միջոցառումներին մասնակցող մարզիկներն ու անձնակազմի անդամներն ունենան COVID-19-ի թեստի բացասական պատասխան, որը ստացել են առաջին խաղին նախորդող 3 օրվա ընթացքում:
- ❑ *Խորհուրդ է տրվում:* Այն Կազմակերպված Երիտասարդական Սպորտային Ծրագրերին, որոնք ընտրել են ախտանիշների զննումների ծրագիր իրականացնել, խորհուրդ է տրվում կիրառել Հանրային Առողջության Վարչության **Որոշումների Ուղեցույցը** այն անձանց համար, ովքեր COVID-19-ի թեստ չեն հանձնել, սակայն Սպորտային Ծրագրին մասնակցելուց առաջ կամ դրա ընթացքում զննման ժամանակ ախտանիշներ են ունեցել:

Վարակի Հետ Շփումների Կառավարումը COVID-19-ի 1 Դեպքի Ժամանակ

- ❑ *Պահանջվում է:* COVID-19-ի 1 հաստատված դեպքի հայտնաբերելուց հետո (մասնակից կամ անձնակազմ) Համապատասխանության Պատասխանատուն հանձնարարում է հիվանդին հետևել COVID-19-ի Համար Տնային Մեկուսացման Հրահանգներին (**ph.lacounty.gov/covidisolation**): ՆՇՈՒՄ COVID-19-ի հաստատված դեպքն այն անձն է, ում COVID-19 թեստի արդյունքը դրական է:
- ❑ *Պահանջվում է:* Համապատասխանության Պատասխանատուն տրամադրում է Հանրային Առողջության Շտապ **Մեկուսացման Հրամանի** կրկնօրինակ և հիվանդին հայտնում է, որ DPH-ը կապ կհաստատի անմիջապես հիվանդի հետ DPH-ի Վարակակրի և Նրա Հետ Շփում Ունեցած Անձանց Հետաքննության

² Լիովին պատվաստված է համարվում այն անձը, ում երկփուլ պատվաստանյութի երկրորդ դեղաչափի ընդունումից անցել է երկու շաբաթ կամ ավելի, ԿԱՄ միափուլ պատվաստանյութի դեղաչափի ստացումից անցել է երկու շաբաթ կամ ավելի:

Ծրագրի միջոցով՝ լրացուցիչ տեղեկություններ հավաքելու և Հիվանդի Մեկուսացման Համար Առողջության Պատասխանատուի Հրամանը պաշտոնապես հանձնելու համար:

- ❑ **Պահանջվում է:** Համապատասխանության Պատասխանատուն աշխատում է բացահայտել Կազմակերպված Երիտասարդական Սպորտային Ծրագրի բոլոր այն անհատներին, ովքեր շփվել են վարակակրի հետ՝ վերջինիս վարակիչ եղած շրջանում (Սերտ Շփում Ունեցածներ՝ Կոնտակտավորներ):
 - Հիվանդը համարվում է վարակիչ իր ախտանիշի ի հայտ գալուն նախորդող 2-րդ օրվանից մինչև այն պահը, երբ նրանից այլևս մեկուսացում չի պահանջվում (այսինքն՝ առնվազն 24 ժամ տեղը չի եղել՝ առանց ջերմիջեցնող դեղորայքի, ԵՎ այլ ախտանիշները բարելավվել են, ԵՎ առնվազն 10 օր է անցել հիվանդության սկսվելու օրվանից): COVID-19 թեստի դրական պատասխան ունեցող և ախտանիշներ չունեցող անձը համարվում է վարակիչ՝ իր թեստը հանձնելուն նախորդող 2-րդ օրվանից մինչև թեստը հանձնելուց հետո 10-րդ օրը:
 - Սերտ Շփում Ունեցած Անձ (Կոնտակտավոր): Համարվում է, որ անձը վարակակրի հետ սերտ շփում է ունեցել վերջինիս վարակող եղած ժամանակահատվածում, եթե հետևյալ չափանիշներից գոնե մեկը բավարարվում է.
 - Վարակված անձից մինչև 6 ոտնաչափ հեռավորության վրա է գտնվել 15 րոպե կամ ավել՝ 24 ժամվա ընթացքում:
 - Չպաշտպանված շփում է ունեցել վարակված անձի կամ COVID-19-ով հաստատված հիվանդի մարմնի հեղուկների և/կամ արտազատուկների հետ (այսինքն՝ նրա վրա հագացել կամ փռշտացել են, նույն սպասքից են օգտվել, թքի հետ են շփվել կամ խնամել են՝ առանց համապատասխան պաշտպանիչ միջոցների կիրառման):
 - Վարակակրի հետ շփումները կքննվեն Հանրային Առողջապահության կողմից՝ հաստատելու համար, թե որ անձինք պետք է կարանտինանցկացնեն, ներառյալ վարակված անձի հետ նույն թիմում գտնվող բոլոր անհատներին կամ վարակված անձ ունեցող թիմի դեմ խաղացող հակառակորդ թիմում գտնվող անձանց կարանտին պահպանելու հնարավորությունը, եթե շփումը հնարավոր չէ բացառել:
- ❑ **Պահանջվում է:** Համապատասխանության Պատասխանատուից պահանջվում է Հանրային Առողջությանը զեկուցել հետևյալի մասին. (1) անձնակազմը և հաստատված COVID-19 ունեցող մասնակիցները, ովքեր հիվանդության սկզբին նախորդող 14 օրերի ընթացքում որևէ պահի գտնվել են Կազմակերպված Երիտասարդական Սպորտային Ծրագր(եր)ում, և (2) Կազմակերպված Երիտասարդական Սպորտային Ծրագրի այն անձինք, ովքեր շփվել են վարակակրի հետ՝ վերջինիս վարակիչ եղած ժամանակահատվածում:
 - Անվտանգ առցանց զեկույցը Հանրային Առողջության Վարչությանը (DPH) COVID-19 վարակի հետ շփման մասին ծանուցելու նախընտրելի մեթոդն է, և այն կարող է իրականացվել համակարգով կամ հեռախոսով, որոնք հասանելիություն ունեն հետևյալ ապահով վեբ հավելվածին՝ <http://www.redcap.link/lacdph.educationsector.covidreport>: Եթե առցանց զեկուցումը հնարավոր չէ, զեկուցումը կարելի է կատարել՝ ներբեռնելով և լրացնելով [COVID-19-ի Հիվանդների և Կոնտակտների Ցանկը Կրթական Ոլորտի համար](#) ձևը և ուղարկելով այն ACDC-Education@ph.lacounty.gov հասցեին: Դեպքի մասին բոլոր ծանուցումները պետք է ներկայացվեն դեպքի մասին ծանուցվելուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում:
- ❑ **Պահանջվում է:** Եթե վարակվածի հետ շփում ունեցած անձինք հայտնաբերվում են հակառակորդ թիմում, ապա հակառակորդ թիմի Համապատասխանության Պատասխանատուն պետք է այդ կոնտակտավորների մասին զեկուցի Հանրային Առողջության Վարչությանը (DPH)՝ էլ. նամակ ուղարկելով ACDC-Education@ph.lacounty.gov հասցեին: Հանրային Առողջության Վարչությունը (DPH)

կհամագործակցի Համապատասխանության Պատասխանատուի հետ՝ հավաքելու շփումների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններ, ներառյալ սպորտային հատուկ իրադարձությունը (իրադարձությունները), որոնք տեղի են ունեցել, ինչպես նաև լրացուցիչ տեղեկություններ վարակակրի հետ շփված անձանց վերաբերյալ՝ հաստատելու, թե որ անձանցից է պահանջվում կարանտին պահպանել:

❑ **Պահանջվում է:** Բոլոր այն անձանց, ովքեր պարզվել է, որ շփում են ունեցել COVID-19-ով վարակվածի հետ Կազմակերպված Երիտասարդական Սպորտային Ծրագրի շրջանակներում, Համապատասխանության Պատասխանատուն ծանուցում է հնարավոր վարակի մասին: Հաղորդակցությանը պետք է կցվի Հանրային Առողջության Շտապ [Կարանտինի Հրամանի](#) կրկնօրինակը: Վարակի հետ շփման մասին ծանուցումը պետք է ներառի ստորև նշված տարրերը: ՆՇՈՒՄ՝ Վարակակրի հետ շփման մասին Ծանուցման նամակի նմուշները հասանելի են այստեղ՝ [COVID-19-ի Ծանուցման Նամակների Նմուշներ Կազմակերպված Երիտասարդական Սպորտային Ծրագրերի Համար](#) (Տե՛ս Նամակի Նմուշաձև 1-ին):

- Վարակակրի հետ շփված* մասնակիցները և անձնակազմը պետք է COVID-19-ի թեստ հանձնեն՝ անկախ նրանից՝ ախտանիշներ ունեն, թե ոչ, և Համապատասխանության Պատասխանատուի տեղեկացնեն թեստի արդյունքների մասին: Սա կորոշի [Կազմակերպված Երիտասարդական Սարգական Ծրագրում](#) հիվանդության տարածման աստիճանը և հիմք կհանդիսանա հետագա վերահսկողական միջոցառումների համար: Թեստավորման միջոցներն ու աղբյուրները ներառում են. Աշխատողների Առողջապահական Ծառայություններ կամ Աշխատանքային Առողջապահական Ծառայություններ, Աշակերտների/Ուսանողների Առողջության Կենտրոն, Անձնական Բժշկական Ծառայություններ Մատուցողներ, [Լոս Անջելես Քաղաքի և Լոս Անջելեսի Շրջանի](#) Թեստավորման Տեղամասեր՝ covid19.lacounty.gov/testing, և [Համայնքային թեստավորման տեղամասեր](#) (տեղային բժշկական կենտրոններ և դեղատներ): Այն անհատները, ովքեր բժշկական մատակարար գտնելու հարցում օգնության կարիք ունեն, կարող են զանգահարել Լոս Անջելեսի Շրջանի Տեղեկատվական գծին 2-1-1 հեռախոսահամարով, որը հասանելի է 24/7:
- Վարակի հետ շփում ունենցած անձինք, [որոնք ազատված չեն կարանտինից](#) (տե՛ս ազատման պայմանները ստորև) պետք է ինքնակարանտին պահպանեն* (մնան իրենց տանը կամ մեկ այլ բնակավայրում՝ առանձնացած մյուսներից) և վերահսկեն ախտանիշները՝ ինչպես նշված է [Կարանտին և Այլ Հրահանգներ Սերտ Շփում Ունեցած Անձանց Համար](#) էջում: Եթե նրանց մոտ ախտանիշներ չեն առաջանում, նրանք կարող են ավարտել կարանտինը, եթե՝
- Անցել է 10 ամբողջ օր վարակված անձի հետ վերջին շփումից հետո (ինչպես սահմանված է վերևում): Գործողությունները կարելի է վերսկսել 11-րդ Օրվանից սկսած: Նրանք պետք է 14 օր շարունակեն հետևել իրենց առողջական վիճակին և COVID-19-ի կանխարգելմանն ուղղված նախազգուշական միջոցառումներին:
- Անցել է 7 ամբողջ օր վարակված անձի հետ վերջին շփումից հետո, եթե նրանց վիրուսային թեստի արդյունքը բացասական է և նրանցից նմուշը վերցվել է վարակակրի հետ վերջին շփումից հետո 5-րդ Օրը կամ ավելի ուշ: Գործողությունները կարելի է վերսկսել 8-րդ Օրվանից սկսած: Նրանք պետք է 14 օր շարունակեն հետևել իրենց առողջական վիճակին և COVID-19-ի կանխարգելմանն ուղղված նախազգուշական միջոցառումներին: Նկատի ունեցե՛ք, որ թեստը պետք է լինի FDA-ի կողմից թույլատրված COVID-19-ի թեստ, ներառյալ Նուկլեինաթթվի Ուժեղացման Թեստ (ՆԱԹ/NAAT, ինչպես օրինակ՝ ՊՇՈ/PCR թեստը) կամ Հակագենի թեստ, որը վերցվում և կատարվում է բժշկական հաստատությունում կամ թեստավորման արտոնագրված վայրում:
- Վարակակրի հետ սերտ շփում ունեցած հետևյալ անձինք ազատվում են կարանտինից այն դեպքում, եթե նրանց մոտ ախտանիշներ չեն առաջանում.

- Ամբողջովին պատվաստված անձինք:
- Անձինք, որոնք ապաքինվել են լաբորատոր ստուգման արդյունքում հաստատված COVID-19-ից վերջին 90 օրերի ընթացքում:

Չնայած, որ նրանցից չի պահանջվում կարանտին պահպանել՝ նրանք պետք է հետևեն իրենց ախտանիշներին և խստորեն հետևեն COVID-19-ի նախազգուշական միջոցառումներին վարակակրի հետ վերջին շփումից հետո 14 օր: Ամբողջովին պատվաստված անձանց հորդորվում է հանձնել վիրուսային թեստ վարակակրի հետ վերջին շփումից 3-5 օր հետո: Չի հորդորվում թեստավորվել այն անձանց, որոնք վերջերս են ապաքինվել COVID-19-ից: Տե՛ս Կարանտին և Այլ Հրահանգներ Սերտ Շփում Ունեցած Անձանց Համար:

- Հանրային Առողջության Վարչությունը (DPH) կապվելու է վարակակրի հետ շփված այն անձանց հետ, ովքեր համապատասխանում են DPH-ի Վարակակրի և Նրա Հետ Շփված Անձանց (Կոնտակտների) Հետաքննության Ծրագրի կարանտինի պահանջներին՝ լրացուցիչ տեղեկություններ հավաքելու և Կարանտինի համար Հանրային Առողջության Պատասխանատուի Հրամանը պաշտոնապես հանձնելու համար:

❑ **Պահանջվում է:** Վարակված անձի հետ միևնույն թիմում գտնվող բոլոր անդամներից պահանջվում է երկու շաբաթ շարունակ շաբաթական մեկ անգամ թեստավորվել՝ անկախ պատվաստման կամ վարակակրի հետ շփման կարգավիճակից, սկսած այն պահից, երբ վարակակիրը վարակող եղած ժամանակ վերջին անգամ ներկա է գտնվել թիմում:

❑ **Պահանջվում է:** Եթե հաստատված COVID-19 ունեցող անհատն իր վարակող եղած ժամանակահատվածում մասնակցել է այլ թիմերի հետ որևէ խաղի, մրցաշարի կամ Կազմակերպված Երիտասարդական Սպորտային Ծրագրի հետ կապված այլ գործողության, Համապատասխանության Պատասխանատուն պետք է ծանուցի հակառակորդ թիմին (թիմերին) հնարավոր վարակի մասին: Վարակի հետ շփման մասին ծանուցման նամակի նմուշը հասանելի է այստեղ՝ [COVID-19-ի Ծանուցման Լամակների Նմուշներ Կազմակերպված Երիտասարդական Սպորտային Ծրագրերի Համար](#) (տե՛ս Լամակի Նմուշաձև 2-ը): Վարակի հետ շփում ունեցած բոլոր թիմերի Համապատասխանության Պատասխանատուները պետք է համատեղ աշխատեն՝ գտնելու բոլոր այն անձանց, որոնք համապատասխանում են վարակի հետ շփում ունեցածների չափանիշներին: Եթե հակառակորդ թիմում կան անհատներ, ովքեր շփվել են վարակակրի հետ, հակառակորդ թիմի Համապատասխանության Պատասխանատուն պետք է շփումների մասին էլեկտրոնային փոստով ծանուցի Հանրային Առողջության Վարչությունը՝ ACDC-Education@ph.lacounty.gov հասցեով՝ շփումների մասին ծանուցում ստանալուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում: Հանրային Առողջության Վարչությունը կաշխատի հակառակորդ թիմի Համապատասխանության Պատասխանատուի հետ՝ վարակի հետ շփումների կառավարման համար տեղեկություններ հավաքելու նպատակով:

❑ **Խորհուրդ է տրվում:** Համապատասխանության Պատասխանատուն կորոշի՝ արդյոք լրացուցիչ ծանուցում է անհրաժեշտ ծրագրի ավելի լայն համայնքին տեղեկացնելու համար՝ վարակի հետ շփումների և COVID-19-ի տարածումը կանխելու համար ձեռնարկվող նախազգուշական միջոցների մասին: Վարակակրի հետ շփումների մասին ծանուցման նամակի ընդհանուր նմուշը հասանելի է այստեղ՝ [COVID-19-ի Ծանուցման Լամակների Նմուշներ Կազմակերպված Երիտասարդական Սպորտային Ծրագրերի Համար](#) (տե՛ս Լամակի Նմուշաձև 3-ը):

Վարակի Հետ Շփումների Կառավարումը 14-օրյա Ժամկետում COVID-19-ի 2 Դեպքերի Ժամանակ

❑ **Պահանջվում է:** 14-օրյա ժամկետում 2 հաստատված դեպքեր (մասնակիցներ և անձնակազմ) հայտնաբերելուց հետո Կազմակերպված Երիտասարդական Սպորտային Ծրագիրը պետք է հետևի 1

հաստատված դեպքի համար պահանջվող քայլերին:

- ❑ **Խորհուրդ է տրվում:** Համապատասխանության Պատասխանատուն որոշում է՝ արդյոք 2 դեպքերը համաճարակաբանորեն (epidemiologically) կապակցված են, ինչը նշանակում է, որ Կազմակերպված Երիտասարդական Սպորտային Ծրագրի երկու վարակված անձինք էլ նույն ժամանակահատվածում ինչ-որ պահի գտնվել են նույն միջավայրում, մինչ մեկը կամ երկուսն էլ վարակող էին:
 - Դեպքերի միջև համաճարակաբանական կապերի որոշումը կարող է պահանջել հետազոտություն՝ շփումների պատմությունը գնահատելու համար և հայտնաբերելու համար բոլոր այն հնարավոր տեղանքներն ու անձանց, որոնք կարող էին Կազմակերպված Երիտասարդական Սպորտային Ծրագրի շրջանակներում շփված լինել վարակակրի հետ՝ նրա վարակող եղած ժամանակ: ՆՇՈՒՄ՝ համաճարակաբանորեն կապված դեպքերը ներառում են Կազմակերպված Երիտասարդական Սպորտային Ծրագրի այն անձանց, որոնք միմյանց հետ նկատելի կապեր ունեն (այսինքն՝ նույն թիմում են, օգտվում են նույն ֆիզիկական տարածքից, ինչպիսիք են հանդերձարանը կամ մեքենան, միասին սոցիալական հավաքույթի են մասնակցում), ինչը ցույց է տալիս հիվանդության կապակցված տարածման ավելի մեծ հավանականությունը Կազմակերպված Երիտասարդական Սպորտային Ծրագրի շրջանակներում, այլ ոչ թե ավելի լայն համայնքից դրա պատահական փոխանցումը:

Վարակի Հետ Շփման Կառավարումը 14-օրյա Ժամկետում COVID-19-ի ≥ 3 Դեպքերի Ժամանակ

- ❑ **Պահանջվում է:** Եթե 14 օրվա ընթացքում Կազմակերպված Երիտասարդական Սպորտային Ծրագրի բացահայտում է 3 կամ ավելի հաստատված դեպքերով խումբ (մասնակիցներ և/կամ անձնակազմ), ապա Կազմակերպված Երիտասարդական Սպորտային Ծրագրի պետք է իրականացնի հետևյալ քայլերը.
 - Խմբակային դեպքի մասին անմիջապես գեկուցի Հանրային Առողջության Վարչությանը (DPH): Անվտանգ առցանց գեկուցքը DPH-ին COVID-19 վարակի հետ շփումների մասին ծանուցելու նախընտրելի մեթոդն է, և այն կարող է իրականացվել համակարգչով կամ հեռախոսով, որոնք ունեն հասանելիություն հետևյալ ապահով վեբ հավելվածին՝ <http://www.redcap.link/lacdph.educationsector.covidreport>: Եթե առցանց գեկուցումը հնարավոր չէ, գեկուցումը կարելի է անել՝ ներբեռնելով և լրացնելով [COVID-19-ի Հիվանդների և Կոնտակտների Ցանկը Կրթական Ոլորտի Համար](#) ձևը և ուղարկելով այն ACDC-Education@ph.lacounty.gov հասցեին:
 - DPH-ը կվերանայի ներկայացրած տեղեկատվությունը՝ որոշելու համար արդյոք բավարարված են ստորև նկարագրված բռնկման չափանիշները և Կազմակերպված Երիտասարդական Սպորտային Ծրագրին 1 աշխատանքային օրվա ընթացքում կտեղեկացնի հաջորդ քայլերի մասին:
 - Բռնկման Չափանիշներ Կրթական Ոլորտի Համար: 14 օրվա ընթացքում առնվազն 3 հաստատված դեպք՝ COVID-19-ի ախտանիշներով կամ առանց ախտանիշների, **Կազմակերպված Երիտասարդական Մարզական Ծրագրերի այն անդամների շրջանում**, որոնք համաճարակաբանորեն կապված են, մինչև նույն տան անդամ չեն և կրթական կամ երիտասարդական սպորտաձևերի հաստատության տարածքից դուրս միմյանց հետ սերտ շփման մեջ չեն գտնվում: Համաճարակաբանական կապերը պահանջում են, որ վարակված անձինք իրենց վարակիչ եղած ժամանակահատվածում միաժամանակ ինչ-որ պահի ներկա լինեն նույն միջավայրում:
 - Եթե բռնկման չափանիշները բավարարվեն, Հանրային Առողջության Վարչությունը Համապատասխանության Պատասխանատուին կտեղեկացնի, որ բռնկման քննությունն է սկսվում Երիտասարդական Մարզական Ծրագրերում: Հանրային Առողջության

Վարչության Քննիչն անմիջապես կապ կհաստատի Համապատասխանության Պատասխանատուի հետ՝ բռնկման ժամանակ վարակակրի հետ շփումները համակարգելու համար: Երիտասարդական Մարզական Ծրագրերից կարող է պահանջվել դադարեցնել թիմերի կամ խմբերի գործունեությունը մինչև հետագա ծանուցումը: Ակտիվ բռնկման ընթացքում Երիտասարդական Մարզական Ծրագրերում կեղծ դրական թեստերը չեն ընդունվելու:

Հավելված A. Կազմակերպված Երիտասարդական Սպորտային Ծրագրի շրջանակներում COVID-19-ի Վարակակրի Հետ Շփումների Կառավարման Քայլերը

| | |
|-------------------------|---|
| <p>1 Դեպք</p> | <ol style="list-style-type: none"> 1) <i>Պահանջվում է:</i> Երիտասարդական Սպորտային Ծրագիրը հրահանգում է հիվանդին հետևել COVID-19-ի Տնային Մեկուսացման Ուղեցույցին: 2) <i>Պահանջվում է:</i> Երիտասարդական Սպորտային Ծրագիրը տրամադրում է Հանրային Առողջության Շտապ Մեկուսացման Հրամանի կրկնօրինակը և տեղեկացնում է հիվանդին, որ DPH-ը լրացուցիչ տեղեկություններ հավաքելու նպատակով կապ կհաստատի անմիջապես հիվանդի հետ: 3) <i>Պահանջվում է:</i> Երիտասարդական Սպորտային Ծրագիրն աշխատում է հիվանդի հետ, որպեսզի գտնի նրա հետ շփումներ ունեցած անհատներին: Սա կարող է ներառել հակառակորդ թիմի անհատներին, էթե վարակող եղած ժամանակահատվածում հիվանդը մասնակցել է որևէ խաղի կամ մրցաշարի: ՆՇՈՒՄ՝ Հանրային Առողջության Վարչությունը (DPH) կաշխատի Ծրագրի(երի) հետ, որպեսզի հաստատի կարանտին պահանջող վարակակիրների հետ շփում ունեցած բոլոր անձանց, որոնցից պահանջվում է կարանտին պահպանել, ներառյալ այն անձանց կարանտին պահպանելու հնարավորությունը, որոնք սկզբնական շրջանում Երիտասարդական Սպորտային Ծրագրի շրջանակներում սերտ կապ ունեցող անձ չեն համարվել: 4) <i>Պահանջվում է:</i> Երիտասարդական Սարգական Ծրագիրը վարակակրի հետ շփված անձանց ծանուցում է*, որ նրանք շփվել են վարակված անձի հետ: Կոնտակտավորներին հրահանգվում է տանը կարանտին պահպանել, վարակակրի հետ շփման պատճառով COVID-19-ի թեստ հանձնել, և նրանց տրամադրվում է Հանրային Առողջության Վարչության Կարանտինի Հրամանի կրկնօրինակը: Նրանց տեղեկացվում է, որ Հանրային Առողջության Վարչությունը անմիջապես կապ կհաստատի նրանց հետ՝ լրացուցիչ տեղեկություններ հավաքելու նպատակով: 5) <i>Պահանջվում է:</i> Երիտասարդական Սպորտային Ծրագիրը 1 աշխատանքային օրվա ընթացքում DPH-ին զեկույց է ներկայացնում Կազմակերպված Երիտասարդական Սպորտային Ծրագրի շրջանակներում հաստատված դեպքի և նրա հետ շփված անհատների մասին տեղեկություններով: 6) <i>Խորհուրդ է տրվում:</i> Երիտասարդական Սպորտային Ծրագիրը ընդհանուր ծանուցում* է ուղարկում ավելի լայն համայնքին՝ վարակակրի հետ շփումների և վարակի տարածումը կանխելուն ուղղված միջոցառումների մասին տեղեկացնելու նպատակով: |
| <p>2 Դեպք</p> | <ol style="list-style-type: none"> 1) <i>Պահանջվում է:</i> Հետևել 1 հաստատված դեպքի համար պահանջվող քայլերին: 2) <i>Պահանջվում է:</i> Եթե 2 դեպքերը պատահել են 14 օրվա ընթացքում, Երիտասարդական Սպորտային Ծրագիրը աշխատում է DPH-ի հետ՝ պարզելու արդյոք դեպքերն ունեն համաճարակաբանական (epi) կապեր: Եթե գոյություն ունեն համաճարակաբանական կապեր, Երիտասարդական Սպորտային Ծրագիրն իրականացնում է վարակի վերահսկման լրացուցիչ միջոցառումներ: |
| <p>3+ Դեպքեր</p> | <ol style="list-style-type: none"> 1) <i>Պահանջվում է:</i> Եթե միմյանցից մինչև 14 օր տարբերությամբ տեղի է ունեցել 3 կամ ավելի վարակի խմբակային դեպք, Երիտասարդական Սպորտային Ծրագիրն անմիջապես տեղեկացնում է Հանրային Առողջության Վարչությանը (DPH): 2) <i>Պահանջվում է:</i> DPH-ը որոշում է արդյոք բռնկման չափանիշները բավարարվել են: Եթե բռնկման չափանիշները բավարարվեն, DPH-ի կսկսի բռնկման հետաքննությունը, և հանրային առողջապահության քննիչը կկապվի Երիտասարդական Սպորտային Ծրագրի հետ՝ բռնկման հետաքննությունը համակարգելու համար: |